ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/31» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 27 նոյեմբերի 2019թ.

ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վիլեն Գիշյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հեղինե Թադևոսյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Արմեն Հովսեփյան, Հայկ Հովհաննիսյան

1. **«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/31» ծածկագրով ընթացակարգի N 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13 չափաբաժինների մասով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման մասին.**

1.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/31» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնման ընթացակարգի հրավերը և հայտարարությունը 18.11.2019թ. հրապարակվել է www.apmeps.am կայքում, ինչպես նաև www.gnumner.am կայքում:

1.2 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2019 թվականի նոյեմբերի 25-ին, Ժամը՝ 11:00-ին apmeps համակարգի միջոցով: ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2019թ.-ի ընթացքում հանդերձանքի ձեռքբերման նպատակով՝ գնանշման հարցման միջոցով էլեկտրոնային ձևով կազմակերպված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/31» ծածկագրով ընթացակարգի 25 նոյեմբերի ժամը՝ 11:00-ի բացման նիստում հանձնաժողովը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5)-րդ ենթակետով, թիվ 2 արձանագրությամբ որոշեց՝ N1,2,3,4,5,6,7,8,9,10,11,12,13 չափաբաժինների մասով նիստը կասեցնել և «Պահապան» ՍՊԸ-ին հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների, քանի որ N1,2,3,4,5,6,7,8,9,10,11,12,13 չափաբաժինների մասով «Պահապան» ՍՊԸ -ն ներկայացրել էր գնային առաջարկ:

1.3 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/31» ծածկագրով գնանշման հարցման ձևով ընթացակարգի միաժամանակյա բանակցությունների նիստը տեղի ունեցավ 27.11.2019 թվականին ժամը 11:00-ին, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության մասնաշենքում՝ ք.Երևան, Արշակունյաց 63 հասցեում: Նիստին ներկա էր «Պահապան» ՍՊԸ–ի ներկայացուցիչը համապատասխան լիազորագրով:

1.4 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/31» ծածկագրով գնանշման հարցման ձևով ընթացակարգի N1,2,3,4,5,6,7,8,9,10,11,12,13 չափաբաժինների մասով գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման համար հանձնաժողովը տրամադրեց 15 րոպե ժամանակ, որպեսզի մասնակիցը ներկայացնի իր վերջնական գնային առաջարկը: Նշված ժամանակի ընթացքում՝ «Պահապան» ՍՊԸ-ն N1,2,3,4,5,6,7,8,9,10,11,12,13 չափաբաժնի մասով ներկայացրեց նոր գնային առաջարկ:

1.5 Ստորև ներկայացվում է 27.11.2019թ.-ի ժամը 11:00-ին «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/31» ծածկագրով գնման ընթացակարգի գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման նիստի ժամանակ բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին մասնակցի նվազեցված գնային առաջարկները՝ N1,2,3,4,5,6,7,8,9,10,11,12,13 չափաբաժինների մասով:

Հ/հ	Գնման ապրանքի անվանումը	Գնման առարկայի նախահաշվային գինը (ՀՀ դրամ)	Նվազեցված գնային առաջարկը ընդհանուր չափաբաժնի համար (ՀՀ դրամ)
			«Պահապան» ՍՊԸ
			ներառյալ ԱԱՀ-ն
1	Կիսաբրդե գլխարկ, գեներալի	Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա	49998
2	Տոնական գլխարկ, գեներալի	Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա	49998
3	Ականջակալներով ձմեռային գլխարկ՝ բնական կարակուլից, գեներալի	Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա	129996
4	Կիսաբրդյա կտորից ձմեռային վերարկու, գեներալի	Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա	189996
5	Տոնական կիտել և ազատթող փողքերով տաբատ, գեներալի	Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա	150000
6	Կիսաբրդյա բաճկոն և ազատթող փողքերով տաբատ, գեներալի	Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա	150000
7	Կիսաբրդյա բաճկոն և ազատթող փողքերով տաբատ, գեներալի	Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա	90000
8	Դաշտային կոստյում՝ կեպիով, կիսաբամբակյա, գունաքողարկված անջրանցիկ կտորից, գեներալի	Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա	69996
9	Ձմեռային դաշտային կոստյում հանովի մորթե օձիքով և կայծակաճարմանդով քողարկված գլխանոցով, գեներալի	Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա	139998
10	Տոնական վերնաշապիկ, գեներալի	Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա	46800
11	Երկարաթև վերնաշապիկ, գեներալի	Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա	30000
12	Շապիկ, գեներալի, գործվածք	Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա	60000
13	Ձմեռային կիսավերարկու, սև	Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա	138000

2. ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2019թ.-ի ընթացքում հանդերձանքի ձեռքբերման նպատակով, գնանշման հարցման միջոցով,էլեկտրոնային եղանակով կազմակերպած «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/31» ծածկագրով ընթացակարգի N1,2,3,4,5,6,7,8,9,10,11,12,13 չափաբաժինների գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

2.1 «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՊՁԲ-19/31» ծածկագրով գնման ընթացակարգի N1,2,3,4,5,6,7,8,9,10,11,12,13 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Պահապան» ՍՊԸ-ին որի գնային առաջարկն ամենացածրն է և չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները:

2.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

2.3. «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով՝ ընտրված մասնակցի հետ կնքել գնման պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Վ. Գիշյան

Քարտուղար՝ ---------- Հ. Թադևոսյան

Գնահատող անդամներ

1 ---------- Ա. Հովսեփյան

2 ---------- Հ. Հովհաննիսյան